Հաստատում եմ՝
Ավանդական բժշկության
համալսարանի
ռեկտոր, գիտ. նախագահ
_____ Ն. Խ. Սարիբեկյան
«03» դեկտեմբեր 2011 թ.

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

ԱՎԱՆԴԱԿԱՆ ԲԺՇԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

1. Համալսարանի կառավարման բարձրագույն մարմինը հիմնադիր անդամների ընդհանուր ժողովն է, որն ունի համալսարանի կառավարման և գործունեության ցանկացած հարցի վերջնական լուծման իրավունք:
2. Հիմնադիր անդամների ընդհանուր ժողովի բացառիկ իրավասությունները ամրագրված են համալսարանի կանոնադրությունում:
3. Համալսարանը կառավարվում է համալսարանի կանոնադրությանը համապատասխան՝ աշխատավորական կոլեկտիվի ինքնակառավարման սկզբունքների և իր ունեցվածքի տնտեսական օգտագործման, հիմնադիր անդամների իրավունքների զուգակցման հիման վրա:
4. Համալսարանի հիմնական գործունեության՝ ուսումնական, գիտամեթոդական, գիտա-հետազոտական, դաստիարակչական և այլ աշխատանքների ղեկավարումն իրագործում է ռեկտորը:
5. Ռեկտորը նշանակվում է հիմնադիր անդամների ընդհանուր ժողովում և հաշվետու է համալսարանի հիմնադիր անդամների ընդհանուր ժողովին:
6. Համալսարանի ընթացիկ, ուսումնական և գիտամանկավարժական գործունեության հիմնական հարցերը քննարկելու համար ռեկտորին կից կազմակերպվում է ռեկտորի խորհուրդ:
7. Խորհրդի կազմի մեջ մտնում են՝ համալսարանի ստորաբաժանումների ղեկավարները, որոնք գործում են իրենց ստորաբաժանումների կանոնակարգերի հիման վրա:
8. Համալսարանի ողջ ղեկավարումն իրականացնում է ռեկտորը և պատասխանատվություն է կրում համալսարանի աշխատանքների արդյունքների համար:

9. Ռեկտորը գործում է համալսարանի անունից, նրան ներկայացնում է բոլոր մարմիններում, հիմնարկներում և ձեռնարկություններում, տնօրինում է համալսարանի ունեցվածքը, կնքում է պայմանագրեր, տալիս հավատարմագրեր, համալսարանի անունով բանկում բացում հաշիվներ:
10. Համալսարանի իրավասության սահմաններում ռեկտորը հրամաններ է հրապարակում, տալիս է ցուցումներ, որոնք պարտադիր են համալսարանի բոլոր աշխատողների և ուսանողների համար:
11. Ռեկտորն աշխատանքի է նշանակում և պաշտոնից ազատում պրոռեկտորներին, դեկաններին, ամբիոնի վարիչներին, պրոֆեսորադասախոսական անձնակազմին, գլխավոր հաշվապահին, սահմանում է աշխատակիցների պարտականություններն ու պատասխանատվությունները: Ռեկտորն իրականացնում է համալսարանի բանվորների ու ծառայողների աշխատանքի ընդունումն ու ազատումը, ապահովում պրոֆեսորադասախոսական կազմի ու գիտական աշխատողների պաշտոնների համատեղության սահմանված կարգի պահպանումը, նշանակում է համալսարանի կազմի մեջ մտնող ստորաբաժանումների ղեկավարներին, սահմանում նրանց իրավասությունը: